



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

№ ԱԽ-7-Ե-8
2017թ.

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

նախագահությամբ՝

Ա. Մկրտումյանի

մասնակցությամբ ԱԽ անդամներ՝

*Ա. Բաբայանի, Գ. Բաղիրյանի,
Ռ. Բարսեղյանի, Գ. Խանդանյանի,
Ա. Խաչատրյանի, Մ. Հարթենյանի,
Գ. Ղազինյանի, Ս. Չիչոյանի,
Վ. Ստեփանյանի, Հ. Փանոսյանի,
Ս. Օհանյանի*

քարտուղարությամբ՝

Շ. Վարդանյանի

2017 թվականի մայիսի 26-ին քաղաք Երևանում՝ դռնփակ նիստում, քննարկելով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի թափուր պաշտոնում նշանակելու համար ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի ներկայացրած թեկնածությունը և ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 122-րդ, 123-րդ հոդվածներով և 111-րդ հոդվածի 1-ին մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հավանություն տալ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի թափուր պաշտոնում նշանակելու համար Նաիրա Միշայի Մխիթարյանի թեկնածությանը:
2. Նաիրա Միշայի Մխիթարյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի թափուր պաշտոնում նշանակելու համար:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ